Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. փետրվարի 25-ի թիվ 43-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս - էջ 2
2. Ամփոփագիր - էջ 4
3. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 8
4. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ - էջ 11
5. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 13
6. Հետհսկողական գործընթաց - էջ 15
7. Առաջարկություններ - էջ 18
8. Հավելվածներ և այլ տեղեկատվություն - էջ 20

1. Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն Մ Ա Ս

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 192-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հունիսի 6-ի թիվ 568 - Ա/2 հրաման:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 3-ը և 2020 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը՝ համաձայն ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 3-ի հաշվեքննության կասեցման մասին թիվ 205-Ա և ՀՀ հաշվեքննիչ պալատ 2020 թվականի դեկտեմբերի 25-ի հաշվեքննության վերսկսման մասին թիվ 248-Ա որոշումների
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական

և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 – Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 200 – Ֆինանսական աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 400 – Համապատասխանության աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները» ստանդարտների համաձայն:
Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

2. Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) (1162-11002), «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» (այսուհետ՝ Ծրագիր 1), (1162-12001) «Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» (այսուհետ՝ Ծրագիր 2) և (1162 - 11005) «Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» (այսուհետ՝ Ծրագիր 3) ծրագրերի (այսուհետ՝ Ծրագրեր) շրջանակներում 2020 թվականի ինն ամիսների պլանի և ճշտված պլանի ընդհանուր տարբերությունը կազմել է 9,569,1 հազ. դրամ: Այն արդյունք է Ծրագիր 1-ում բյուջետային ֆինանսավորման ճշգրտման և սահմանված կարգով իրականացվել է ակադեմիական կազմակերպությունների միջև վերաբաշխում՝ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի «Բյուրականի աստղադիտարան» ՊՈԱԿ-ից (11004 միջոցառում) գումարը հանվել և հատկացվել է ՀՀ ԳԱԱ երեք այլ ՊՈԱԿ-ների (11002 միջոցառում):

Կոմիտեի Ծրագրերում ֆինանսավորումը 2020թ. ինն ամիսների համար կազմել է 6,615,364.6 հազար դրամ, որը ճշտված պլանի (7,940,315.9 հազ. դրամ) նկատմամբ կազմել է 83,3 տոկոս կամ թերֆինանսավորվել է 1,324,951.3 հազ. դրամ**:** Կոմիտեի 2020 թվականի ինն ամիսների Ծրագրերի ճշտված պլանի հանդեպ թերֆինանսավորումները կապված են մի քանի հանգամանքի հետ (տես՝ Աղյուսակ 1):

Կոմիտեի Ծրագրերում 2020 թ. ինն ամիսներին ճշտված պլանի և դրամարկղային ծախսի (6,585,858.7 հազ. դրամ) միջև առաջացած 1,354,457.2 հազ. դրամ տարբերության և Աղյուսակ 1-ի ընդհանուր թերֆինանսավորման միջև առկա է 29,505. 9 հազ. դրամ (Ծրագիր 1-ով 1,848.9 հազ. դրամ և Ծրագիր 3-ով 27,656.9 հազ. դրամ):

Ըստ Ծրագրերի Կոմիտեի հաշվետու ժամանակաշրջանի փաստացի և դրամարկղային ծախսերի միջև առկա է 560,759.0 հազ. դրամ տարբերություն, որը ըստ Ծրագիր 1-ի կազմել է 360,034.5 հազ. դրամ, Ծրագիր 2-ի՝ 28,885.7 հազ. դրամ, իսկ ըստ Ծրագիր 3-ի՝ 171,838.8 հազ. դրամ: Նշված տարբերությունները պայմանավորված են հաշվետու ժամանակահատվածում գոյացած դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հարաբերակցությամբ (տես՝ Աղյուսակ 2):

Աղյուսակ 1

Կոմիտեի Ծրագրերի 2020 թ. ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ թերֆինանսավորման պատճառների

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2020 թ. ինն ամիսներ			**Թերֆինանսավորման պատճառներ**
		Ճշտված պլան	Ֆինան-սավորում	Թերֆինան-սավորում	
1	Ծրագիր 1	**5,740,685.3**	**4,968,764.1**	**771,921.2**	*Պայմանավորված են կազմակերպությունների կողմից ներկայացվող հայտերով, տարբերությունները տարեկան կտրվածքով պետք է հասցվեն մինիմումի, իսկ մնացածի մասով կազմակերպությունների կողմից կներկայացվեն պարզաբանումներ:*
2	Ծրագիր 2	**589,400.0**	**504,250.0**	**85,150.0**	*Ֆինանսավորումը տրվում է կարգի համաձայն՝ կազմակերպությունների կողմից ներկայացվող փվյալների հիման վրա*
3	Ծրագիր 3	**1,610,230.6**	**1,142,350.4**	**467,880.2**	*Նախատեսված որոշ մրցույթներ ուշ են ամփոփվել, որոնց պատճառով ֆինանսավորումները չեն սկսվել նախատեսված ժամկետներում:*
Ընդամենը՝		**7,940,315.9**	**6,615,364.6**	**1,324,951.3**	

Աղյուսակ 2

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ում դրամարկղային և փաստացի ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների, տարբերությունների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	**Ծրագրեր**	**2020թ. ինն ամիսներ**						
		Դրամարկղային ծախս	**Փաստացի ծախս**	**Տարբե-րություն (+, -)**	**Դեբիտորա-կան պարտքերի աճ, նվազում (+, -)**	**Կրեդիտո-րական պարտքերի աճ, նվազում (+, -)**	**Բացարձակ չերում (+, -)**	**Սյունակ 8 – Սյունակ 7 (+, -)**
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*

1	Ծրագիր 1	4,966,915.2	5,326,949.7	+ 360,034,5	-228,430.0	+ 131,604.5	+ 360,034,5	*0,0*
2	Ծրագիր 2	504,250.0	533,135.7	+ 28,885,7	- 138.9	+ 28,746.8	+ 28,885,7	*0,0*
4	Ծրագիր 3	1,114,693.5	1,286,532.3	+ 171,838,8	-170,466.6	+ 1,372. 2	+ 171,838,8	*0,0*
Ընդամենը՝		6,585,858.7	7,146,617.7	+ 560,759.0	-399,035.5	+ 161,723.5	+ 560,759.0	*0,0*

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, ըստ Կոմիտեի Ծրագրերի դեբիտորական պարտքերը տարեսկզբին կազմել են 775,434.7 հազար դրամ, որն ամբողջապես գոյացել է նախորդ տարվա բյուջեից: Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ըստ Կոմիտեի Ծրագրերի ընդհանուր դեբիտորական պարտքերը կազմել են 376,417.2 հազար դրամ, նվազումը՝ 399,035. 5 հազար դրամ: Կրեդիտորական պարտքեր ըստ Ծրագրերի տարեսկզբի դրությամբ Կոմիտեն չի ունեցել, իսկ 2020 թ. ինն ամիսների ավարտին՝ սեպտեմբերի 30-ի դրությամբ, դրանք կազմել են 161,723. 5 հազ. դրամ:

Ըստ Ծրագրերի դեբիտորական պարտքերի պատկերը հետևյալն է՝

- Կոմիտեի Ծրագիր 1-ի դեբիտորական պարտքերը ձևավորվել են «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածում՝ աճելով 79,253. 7 հազ. դրամով, «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» (463500) հոդվածում նվազելով՝ 373. 7 հազ. դրամով և «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածում նվազելով 307,310. 0 հազ. դրամով:
- Կոմիտեի Ծրագիր 2-ի դեբիտորական պարտքերը տարեսկզբին «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածով տարեսկզբի 300,0 հազ. դրամից նվազել են 138,9 հազ. դրամով և ինն ամիսների վերջին կազմել են 161,1 հազ. դրամ:

- Ծրագիր 3-ի դեբիտորական պարտքերը տարեսկզբին «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածով տարեսկզբի 206,395,0 հազ. դրամից էականորեն նվազել են 170,466.6 հազ. դրամով և հավշետու ժամանակաշրջանի վերջին կազմել են ընդամենը 35,928.0 հազ. դրամ:

Նշված հոդվածների դեբիտորական պարտքերի ընդհանուր նվազումը կազմել է 399,035. 5 հազ. դրամ, որը տարեսկզբի նկատմամբ եռամսյա կտրվածքով դեբիտորական պարտքերի նվազում է՝ կապված չիրականացված ծախսերի շարունակականության հետ: Հիշատակված դեբիտորական պարտքերի զրոյացումը նախատեսված է իրականացնել մինչև բյուջետային տարվա ավարտը:

Ըստ Ծրագրերի կրեդիտորական պարտքերի պատկերը հետևյալն է՝

- Կոմիտեի Ծրագիր 1-ի կրեդիտորական պարտքերը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածում աճել են 4,392.1 հազ. դրամով, իսկ «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածով՝ 127,212.4 հազ. դրամով (Ընդամենը՝ 131,604.5 հազ. դրամ):
- Կոմիտեի Ծրագիր 2-ի կրեդիտորական պարտքերը «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածով աճել են 28,746.8 հազ. դրամով:
- Կոմիտեի Ծրագիր 3-ի կրեդիտորական պարտքերը «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածով աճել են 1,372.2 հազ. դրամով:

Նշված հոդվածների կրեդիտորական պարտքերի ընդհանուր աճը կազմել է 161,723. 5 հազ. դրամ, որոնք հիմնականում պայմանավորված են եռամսյա կտրվածքով շարունակական ծախսերի հետ, (հիմնականում եռամսյակի վերջին ամսվա չվճարված աշխատավարձեր): Տարեվերջում առկա կրեդիտորական պարտքերի վերաբերյալ կազմակերպությունների կողմից Կոմիտեին կներկայացվեն համապատասխան բացատրություններ:

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության Կոմիտեի Ծրագրերի շրջանակներում 2020 թվականի ինն ամիսների պլանը կազմել է 7,930,746. 8 հազ. դրամ, իսկ ճշտված պլանը հաստատվել է 7,940,315. 9 հազ. դրամ: Կոմիտեի ֆինանսավորումը ըստ Ծրագրերի կազմել է 6,615,364. 6 հազ. դրամ (ինն ամիսների ճշտված պլանի 83,3 տոկոսը կամ թերֆինանսավորումը՝ 1,324,951.3 հազ. դրամ), իսկ 2020թ. ինն ամիսների արդյունքներով ըստ Ծրագրերի Կոմիտեի դրամարկղային ծախսը՝ 6,585,858,7 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 7,146,617. 7 հազ. դրամ: Կոմիտեի 2020թ. տարեկան ֆինանսական ամփոփ ցուցանշները տրված են աղյուսակ 3-ում, 2020թ. ինն ամիսների ֆինանսական ամփոփ ցուցանիշները՝ աղյուսակ 4-ում, իսկ ըստ Ծրագրերի՝ աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 3

Կոմիտեի 2020 թվականի տարեկան ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազար դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, *(ծածկագիրը)*	Տարեկան պլան	Փոփոխու-թյուններ տարեկան պլանում ՀՀ կառավարու-թյան կողմից	Տարեկան ճշտված պլան	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Տարեկան պլանի մնացորդ՝ 2020 թ. ինն ամիսների դրությամբ
Կոմիտե ***(105015)***	**14,128,041. 3**	**244,947. 0**	**14,172,988. 3**	**60. 9**	**5,570,422.2**

Աղյուսակ 4

Կոմիտեի 2020 թվականի ինն ամիսների ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազար դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, *(ծածկագիրը)*	2020 թվականի ինն ամիսներ						Կատարման %-ը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ	Տարեվերջի պլանի մնացորդ՝ 2020 թ. ինն ամիսների դրությամբ
	Պլան	Փոփոխու-թյուններ տարեկան պլանում ՀՀ կառավարու-թյան կողմից	Ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս		
Կոմիտե ***(105015)***	**10,064,989.4**	**163,947.0**	**10,228,936.4**	**8,802,566.1**	**8,751,734.6**	**9,262,949.6**	**86,1**	**1,091,058.6**

Թիվ	Հաշիվներ	Հաշվետու ժամանա-կահատվածի պլան	Հաշվետու ժամանա-կահատվածի ճշտված պլան	Ֆինանսա-վորում	Դրամարկ-ղային ծախս	Փաստացի ծախս
Ծրագիր 1 (Կատարողական՝ 86,6 %)						
1	*(462100) «Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին»*	603,173.8	603,173.8	565,823.8	565,822.9	565,822.9
2	*(463500) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին»*	1,307.9	1,307.9	1,305.7	1,305.7	1,679.4
3	*(463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին»*	3,145,109.2	3,154,678.3	3,132,165.5	3,132,165.5	3,057,303.9
4	*(463800) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին»*	128,736.7	128,736.7	121,538.6	121,538.6	121,538.6

5	*(463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ»*	1,852,788.6	1,852,788.6	1,147,930.5	1,146,082.5	1,580,604.9
ԸՆԴԱՄԵՆԸ՝		**5,731,116.2**	**5,740,685.3**	**4,968,764.1**	**4,966,915.2**	**5,326,949.7**
Ծրագիր 2 (Կատարողական՝ 85,6 %)						
6	*(463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ»*	589,400.0	589,400.0	504,250.0	504,250.0	533,135.7
ԸՆԴԱՄԵՆԸ՝		**589,400.0**	**589,400.0**	**504,250.0**	**504,250.0**	**533,135.7**
Ծրագիր 3 (Կատարողական՝ 70,9 %)						
7	*(463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին«*	263,312.8	526,512.8	511,541.7	495,607.5	608,259.5
8	*(463800) « Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին«*	30,399.5	54,199.5	54,032.4	54,032.4	55,415.4
9	*(463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ»*	1,316,518.3	1,029,518.3	576,776.3	565,053.6	622,857.4
ԸՆԴԱՄԵՆԸ՝		**1,610,230.6**	**1,610,230.6**	**1,142,350.4**	**1,114,693.5**	**1,286,532.3**
ԱՄԲՈՂՋԸ՝		**7,930,746.8**	**7,940,315.9**	**6,615,364.6**	**6,585,858.7**	**7,146,617.7**

4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Կոմիտեի 2020թ. ինն ամիսների Ծրագիր 3–ում ներառված «Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների թվաքանակ» ենթածրագրի հաշվեքննությամբ պարզվեց, որ

4.1 Կոմիտեի Ծրագիր 3–ում ներառված «Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների թվաքանակ» ենթածրագրի վերաբերյալ հաշվեքննության համար անհրաժեշտ և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվությունը ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից պահանջվել, սակայն ստացվել են թերի: Մասնավորապես, չեն տրամադրվել հայտատու և հաղթած մասնակիցների զբաղեցրած պաշտոնների և գիտական աստիճանների մասին համապատասխան սյունակում պահանջվող տվյալները, որոնք առկա են ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հունիսի 6-ի թիվ 568 - Ա/2 հրամանով հաստատված հավելված 2-ի (ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1518-Ա/2 հրամանի) գլուխ 3 «Հայտերի լրացման և ներկայացման կարգը»-ի թիվ 3.3 կետով սահմանված կազմակերպությունների ղեկավարների կողմից ստորագրված և կնիքված տիտղոսաթերթերում:

4.2 Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանումներ և միջոցառման կատարման ժամանակացույց:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Կոմիտեի 2020 թվականի ինն ամիսների Ծրագրերի հաշվեքննությամբ պարզեց, որ.

5.1 Կոմիտեի 2020 թվականի ինն ամիսների Ծրագիր 1-ով նախատեսված «Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացում, ծրագրերի իրականացում, գիտական սարքավորումների արդիականացում, միջազգային համագործակցության աջակցություն» միջոցառումների թվով 13 ուղղություններից 7-ում արձանագրվել են քանակական էական տարբերություններ՝ 773,770.1 հազար դրամ գումարի շրջանակներում: Հաշվեքննությամբ պարզվեց, որ մասնավորապես՝

- «Պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված գիտական միջոցառումներ» ենթածրագրով նախատեսված 30 միջոցառման փոխարեն իրականացվել է 1-ը, իսկ «Պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված երիտասարդ գիտնականների դպրոցներ» ենթածրագրով՝ նախատեսված 15-ից 1-ը: Ինչ վերաբերում է «Գիտական կենտրոնների ստեղծում և տեխնոլոգիական հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրի իրականացում ծրագրով աջակցություն ստացած գիտական կենտրոններ» ենթածրագրին, ապա նախատեսված մեկ միջոցառումը չի իրականացվել: Հաշվեքննության օբյեկտը վերոհիշյալ երեք ենթածրագրերով քանակագումարային տարբերությունները հետաձգել և իրականացումը տեղափոխել է 2020թ. չորորդ եռամսյակ:
- «Գիտական գործուղումներ» ենթածրագրով նախատեսված թվով 50 միջոցառումներից իրականացվել է 1-ը՝ համավարակով պայմանավորված հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության պատճառով:
- Նախատեսված թվով 1200 «Գիտական հայտերի փորձաքննություններ» ենթածրագրով իրականացվել են 300-ը, իսկ «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում ծրագրով պետական աջակցություն ստացած կազմակերպություններ» ենթածրագրով նախատեսված թվով 3 միջոցառումները չեն իրականացվել կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի բացակայության պատճառով:
- Թվով 1183 «Անկախ փորձագետների (այդ թվում՝ արտասահմանյան) ներգրավում» ենթածրագրով իրականացվել է ընդամենը 220-ը, որը

պայմանավորված է թեմատիկ հետազոտությունների իրականացման հետաձգմամբ:

5.2 Կոմիտեի Ծրագիր 2-ի հաշվեքննությամբ պարզեց, որ 2020 թվականի ինն ամիսների 85,150.0 հազ. դրամ տնտեսումը պայմանավորված է թեմաներում ընդգրկված գիտաշխատողների՝ գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ ստացող անձանաց փաստացի թվաքանակների նվազմամբ:

5. 3 Կոմիտեի Ծրագիր 3-ի հաշվեքննությամբ պարզեց, որ 2020 թվականի ինն ամիսների 195,537. 1 հազ. դրամ տնտեսումը պայմանավորված է մի շարք թեմաների ավարտով և անցկացված նոր մրցույթները ամփոփված չլինելու հանգամանքներով: Ծրագիր 3-ով նախատեսված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» միջոցառումների թվով 7 ուղղություններից 2-ում արձանագրվել են քանակական էական տարբերություններ.

- «Թեմաների թիվ» ենթածրագրով նախատեսված թվով 270 թեմաների փոխարեն իրականացվել է 244-ը, որը պայմանավորված մի շարք թեմաների ավարտմամբ, ինչպես նաև հանրապետությունում արտակարգ իրավիճակով:
- «Նոր ստեղծված հետդոկտորական ծրագրերի թիվ» ենթածրագրով նախատեսված թվով 20 ծրագրերի փոխարեն իրականացվել է 10-ը՝ պայմանավորված հետդոկտորական ծրագրերի փաստացի թվով:

5. 1 «Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներ» բաժնով 2018–2020 թթ. մրցույթներին մասնակցության համար հայտագրված ընդհանուր զանգված-բազան կազմում է թվով 60 գիտական, գիտատեխնիկական կազմակերպությունների թվով 309 գիտաշխատողներ, ընդ որում հիշատակված ժամանակահատվածում մրցույթներում հաղթող են ճանաչվել թվով 35 կազմակերպություններից (կամ՝ 58,3 %) 122 գիտաշխատողներ (կամ՝ 40,0 %): Նշված կազմակերպություններից և գիտաշխատողներից 2018-2019թթ. մրցույթներում հայտեր են ներկայացրել թվով 48 կազմակերպություններից թվով 229 գիտաշխատողներ, որոնցից հաղթող են ճանաչվել թվով 28 կազմակերպություններ ներկայացնող թվով 102 գիտաշխատողներ (44,5%), իսկ 2019-2020թթ. մրցույթներում հայտեր են ներկայացրել թվով 28 կազմակերպություններից թվով 221 գիտաշխատողներ, որոնցից հաղթող են ճանաչվել՝ 100-ը (45,2%):

Հայտեր ներկայացրած կազմակերպությունների և հաղթած գիտաշխատողների բազաներում ընդգրկված երկու ժամանակահատվածների համադրումից պարզվեց, որ ընդհանուր հաղթած թվով 35 կազմակերպություններից թվով 25-ում առկա են համընկնումներ (71,4%), իսկ գիտաշխատողների ցանկում՝ համընկնում են թվով 80 գիտաշխատողներ (79,2%):

5. 4 «Բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներ (մինչև 35 տարեկան)» բաժնով 2018–2020թթ. մրցույթներին մասնակցելու համար հայտագրված ընդհանուր զանգված-բազան կազմում է թվով 35 գիտական, գիտատեխնիկական կազմակերպությունների թվով 107 երիտասարդ գիտաշխատողներ, ընդ որում հիշատակված ժամանակահատվածում մրցույթներում հաղթող են ճանաչվել թվով 19 կազմակերպություններից (կամ՝ 54,3%) 33 երիտասարդ գիտաշխատողներ (կամ՝ 30,8%):

2018-2019թթ. մրցույթներում հայտեր են ներկայացրել ընդհանուր առմամբ թվով 28 կազմակերպությունների թվով 68 երիտասարդ գիտաշխատողներ, որոնցից հաղթող են ճանաչվել թվով 14 կազմակերպություններ ներկայացնող թվով 22 երիտասարդ գիտաշխատողներ (32,3%), իսկ 2019-2020թթ. մրցույթներում հայտեր են ներկայացրել թվով 25 կազմակերպությունների թվով 68 երիտասարդ գիտաշխատողներ, որոնցից հաղթող են ճանաչվել թվով 13 կազմակերպություններ ներկայացնող թվով 25 երիտասարդ գիտաշխատողներ (36,8%):

Հայտեր ներկայացրած կազմակերպությունների և հաղթած երիտասարդ գիտաշխատողների բազաներում ընդգրկված երկու ժամանակահատվածների համադրումից պարզվեց, որ ընդհանուր հաղթած թվով 18 կազմակերպություններից 9-ում (50,0%) առկա են համընկնումներ, իսկ երիտասարդ գիտաշխատողների ցանկում համընկնում են թվով 14-ը (59,6%) (Տես՝ Հավելված 1):

5.4 Կոմիտեի Ծրագրերում 2020թ. ինն ամիսներին ճշտված պլանի և ֆինանսավորման միջև առաջացած ընդհանուր 1,354,457.2 հազ. դրամ տարբերության, ճշտված պլանի ու դրամարկղային ծախսի միջև առաջացած ընդհանուր 1,354,457.2 հազ. դրամ տարբերության բացարձակ շեղումը՝ 29,505. 9 հազ. դրամը (Ծրագիր 1-ով՝ 1,848.0 հազ. դրամ և Ծրագիր 3-ով՝ 27,656.9 հազ. դրամ) տեխնիկական պատճառով ավել բացված ֆինանսավորման արդյունք է, որը չի ուղղվել դրամարկղային ծախսին և ձևակերպվել՝ որպես մնացորդ:

6. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Հ/Հ	Առաջարկություններ	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարման ենթակա է/ Կատարման ենթակա չէ	Հիմնավորումներ
Անհամապատասխանությունների վերացման առաջարկություններին վերաբերող մասով				
1	Ներքին հոդվածային փոփոխությունների և միևնույն ծրագրերի միջեռամսյակային վերաբաշխումների թույլատրված չափաբաժիններով իրականացման դեպքում սահմանված կարգով ծանուցել ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշման 12-րդ հավելվածի 5-րդ կետով սահմանված կարգի:	«Ընդունված է»	«Կատարման ենթակա է»	Նախարարության Կոմիտեի նախագահի 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 01 – Ա/Ք հրամանի 1-ին կետով Կոմիտեի գիտության քաղաքականության և գիտական գործունեության կազմակերպման վարչություններին հանձնարարվել է «ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերը քննարկելիս հաշվի առնել հնարավոր բոլոր ռիսկային գործոնները և ըստ այդմ գնահատել ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների համադրությունն այն դեպքերի համար, երբ պայմանավորված ռիսկային գործոններով՝ բյուջետային թերակատարումներ առաջանալու դեպքում հնարավոր լինի իրականացնել արդյունավետ վերաբաշխումներ»: Ժամկետ՝ մինչև 2021 թվականի ավարտ:
2	Տարեկան և եռամսյակային կտրվածքներով ՀՀ պետական բյուջեի կատարման հավելվածներով սահմանված նախատեսված և գիտական, գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ներկայացված փաստացի հայտերի քանակների էական տարբերությունների դեպքում իրականացնել միջոցների տնտեսման, համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակից բխող վերաբաշխումների այնպիսի մեխանիզմներ, որոնց կիրառմամբ ոչ ֆինանսական ցուցանիշների տարբերությունները կհամընկնեն բյուջետային միջոցների ծախսման համամասնություններին:	«Ընդունված է»	«Կատարման ենթակա է»	Նախարարության Կոմիտեի նախագահի 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 01 – Ա/Ք հրամանի 1-ին կետով Կոմիտեի գիտության քաղաքականության և գիտական գործունեության կազմակերպման վարչություններին հանձնարարվել է «ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերը քննարկելիս հաշվի առնել հնարավոր բոլոր ռիսկային գործոնները և ըստ այդմ գնահատել ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների համադրությունն այն դեպքերի համար, երբ պայմանավորված ռիսկային գործոններով՝ բյուջետային թերակատարումներ առաջանալու դեպքում հնարավոր լինի իրականացնել արդյունավետ վերաբաշխումներ»: Ժամկետ՝ մինչև 2021 թվականի ավարտ:

3	Գնման հրավերները, պայմանագիր կնքելու հայտարարությունները, կնքված պայմանագրերի մասին հայտարարությունների ժամկետները, պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվող և հաստատվող գնման հայտերը, ինչպես նաև՝ գնահատող հանձնաժողովի գործառույթները իրականացնել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 5-րդ բաժնի 21-րդ կետի 1-ին ենթակետի և 6-րդ բաժնի 30-րդ կետի պահանջներին համապատասխան:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Նախարարության Կոմիտեի նախագահի 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 01 – Ա/Ք հրամանի 3-րդ կետի ա) ենթակետով Կոմիտեի ֆինանստնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին հանձնարարվել է «Գնման հրավերները, պայմանագիր կնքելու հայտարարությունները, կնքված պայմանագրերի մասին հայտարարությունների ժամկետները, պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվող և հաստատվող գնման հայտերը, ինչպես նաև՝ գնահատող հանձնաժողովի գործառույթները իրականացնել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 5-րդ բաժնի 21-րդ կետի 1-ին ենթակետի և 6-րդ բաժնի 30-րդ կետի պահանջներին համապատասխան»: Ժամկետ՝ մինչև 2021 թվականի ավարտ:
4	Կոմիտեի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային ծառայությունների մասով գնումների ընթացակարգերը, ինչպես նաև գնման ընթացքում անգործության ժամկետի հետ կապված գործառույթները համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Նախարարության Կոմիտեի նախագահի 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 01 – Ա/Ք հրամանի 3-րդ կետի բ) ենթակետով Կոմիտեի ֆինանստնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին հանձնարարվել է «Կոմիտեի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային ծառայությունների մասով գնումների ընթացակարգերը, ինչպես նաև գնման ընթացքում անգործության ժամկետի հետ կապված գործառույթները համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան»: Ժամկետ՝ մինչև 2021 թվականի ավարտ:

5	Գնումների տարեկան պլանով սահմանված չափաբաժինների տրոհմամբ պայմանավորված գնումները համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 4-րդ բաժնի 16-րդ կետի պահանջների հետ:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Նախարարության Կոմիտեի նախագահի 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 01 – Ա/Ք հրամանի 3-րդ կետի գ) ենթակետով Կոմիտեի ֆինանստնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին հանձնարարվել է «Գնումների տարեկան պլանով սահմանված չափաբաժինների տրոհմամբ պայմանավորված գնումները համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 4-րդ բաժնի 16-րդ կետի պահանջների համապատասխան»: Ժամկետ՝ մինչև 2021 թվականի ավարտ:
Ընթացիկ եզրակացության այլ գրավոր տեղեկատվության վերաբերող մասով				
6	Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարների գծով դոկտորների և թեկնածուների թվաքանակների, ինչպես նաև ամսեվճարների իրականացման դեպքում հետևել շահառուների կողմից ներկայացվող հայտերին՝ չափաքանակների փոփոխությունների և տեղափոխումների պատճառների բացահայտման հստակ հիմնավորումներով:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Նախարարության Կոմիտեի նախագահի 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 01 – Ա/Ք հրամանի 2-րդ կետով Կոմիտեի գիտության քաղաքականության վարչությունը հանձնարարվել է «Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարների համար կազմակերպությունների կողմից ներկայացվող նախնական տվյալների վերստուգման նպատակով պահանջել լրացուցիչ տեղեկատվություն և հիմնավորումներ՝ հատկապես գիտության դոկտորների և թեկնածուների թվաքանակների մեծ տատանումներ արձանագրվելու դեպքում»: Ժամկետ՝ մինչև 2021 թվականի ավարտ:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է Կոմիտեին.

7.1 Քննարկել և լուծումներ առաջարկել Ծրագիր 3–ում ներառված «Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների թվաքանակ» և «Բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներ (մինչև 35 տարեկան)» ենթաբաժիններում հայտեր ներկայացրած կազմակերպությունների և հաղթած ինչպես երիտասարդ, այնպես էլ այլ գիտաշխատողների, հաջորդող ժամանաշրջաններում կազմակերպությունների զգալի չափով համընկնումների, հաղթած հայտատուների կրկնվող բազմաթիվ դեպքերի հարցերի վերաբերյալ:

7.2 Միջոցառումներ ձեռնարկել և ստեղծել այնպիսի վերահսկողական մեխանիզմներ, որոնցով կբացառվեն կազմակերպությունների կողմից եռամսյակային կտրվածքներով ճշտված պլանների նկատմամբ դրամարկղային և փաստացի ծախսերի միջև տարբերությունները, տեխնիկական պատճառներով ավել բացված ֆինանսավորումները և որպես մնացորդ դրանց ձևակերպումները:

7.3 Ներդնել վերահսկողական այնպիսի գործիքակազմեր, որոնց կիրառմամբ կվերահսկվեն կազմակերպությունների կողմից հաստատված եռամսյակային ոչ ֆինանսական արդյունքին միտված չափորոշիչների էական թերակատարումները, Դրանց հետևանքներով ձևավորված տնտեսումները, ցածր կատարողականները, միջոցառումների չիրականացումները կազդեն հաջորդ ժամանակահատվածների հաստատվող նախահաշիվների, ֆինանսական հայտերի ընդունման և բյուջետային ֆինանսավորման ցուցանիշների վրա:

7.4 Հսկողություն սահմանել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվության տրամադրման ամբողջականության, լիարժեքության, պահանջված ձևաչափերի համապատասխանության վրա:

7.5 Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանումներ և միջոցառման կատարման ժամանակացույց:

8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարության Կոմիտեի 2018 - 2020 թթ. . բարձր արդյունավետությամբ աշխատող գիտական, գիտատեխնիկական կազմակերպությունների և գիտաշխատողների

Տարեթվեր	Հայտեր ներկայացրած				Մրցույթներում հաղթած				2018 - 2020 թթ. . բարձր արդյունավետությամբ աշխատող			
	Գիտաշխատողների քանակը *(մարդ)*	Ընդամենը՝ **շ կ ր կ ն վ ո ղ** Գիտաշխատողների քանակը *(մարդ)*	Գիտական, գիտատեխնիկական կազմակերպությունների քանակը *(հատ)*	Ընդամենը՝ **շ կ ր կ ն վ ո ղ** Գիտական, գիտատեխնիկական կազմակերպությունների քանակը *(հատ)*	Գիտաշխատողների քանակը *(մարդ)*	Ընդամենը՝ **շ կ ր կ ն վ ո ղ** Գիտաշխատողների քանակը *(մարդ)*	Գիտական, գիտատեխնիկական կազմակերպությունների քանակը *(հատ)*	Ընդամենը՝ **շ կ ր կ ն վ ո ղ** Գիտական, գիտատեխնիկական կազմակերպությունների քանակը *(հատ)*	Մրցույթներով հաղթած գիտաշխատողների **համընկնումեր** *(մարդ)*	***Տեսակարար կշիռը (%)***	Գիտական, գիտատեխնի-կական կազմակերպու-թյունների քանակների **համընկնումեր** *(հատ)*	***Տեսակարար կշիռը (%)***
Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներ												
2018 - 2019 թթ. .	229	309	48	60	102 *(կամ՝ 44,5 %)*	122 *(կամ՝ 40,0%)*	28	35 *(կամ 53,8%)*	80	*79.2*	25	*71.4*
2019 - 2020 թթ. .	221		44		100 *(կամ՝ 45,2 %)*		28					
Բարձր արդյունավետությամբ աշխատող ե ր ի տ ա ս ա ր դ գիտաշխատողներ *(մինչև 35 տարեկան)*												
2018 - 2019 թթ. .	68	107	28	35	22 *(կամ՝ 32,3 %)*	33 *(կամ՝ 30,8%)*	14	18 *(կամ՝ 51,4%)*	14	*59.6*	9	*50.0*
2019 - 2020 թթ. .	68		25		25 *(կամ՝ 36,8 %)*		13					